ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԶՊՄԿ-ի վճարած հարկերով Քաջարանում լուծվում են անլուծելի թվացող խնդիրներ

ԶՊՄԿ-ի նվերը՝ ազդակիր Սևաքար բնակավայրին

Տառեղ՝ Կապանի սպիտակափետուր հյուրը

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ ՊՂՆՁԱՄՈԼԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԸ

№57
2026թ.

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR ԿՈԴԸ՝ ԲԵՌՆԻՐ №57 ԱՄՍԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Տնային Բվիկ

Տնային բվիկը Սյունիքի կենսաբազմազանության փոքր, բայց կարևոր ներկայացուցիչներից է: Գիշերային այս թռչունը բնակվում է անտառեզրերում ու գյուղամերձ տարածքներում՝ նպաստելով էկոհամակարգի բնական հավասարակշռությանը և վերահսկելով միջատների ու մանր կրծողների թվաքանակը: Նրա ներկայությունը խոսում է տարածքի առողջ բնության մասին:

Լուսանկարը՝ Բերտա Սարտիրոսյանի

ԶՊՄԿ-ի վճարած հարկերով Քաջարանում լուծվում են անլուծելի թվացող խնդիրներ

Արմեն Ղահրամանյան

Գարեգին Գաբրիելյան

ԶՊՄԿ-ն շարունակում է մնալ Քաջարան համայնքի միակ խոշոր ձեռնարկությունը, որի վճարած բնապահպանական հարկերով մեկը մյուսի հետևից լուծվում են անլուծելի թվացող խնդիրները: 2025-ին համայնքապետարանը բնապահպանական մասհանումներով բժշկական կենտրոնի համար գնել է խիստ անհրաժեշտ սարքավորումներ, ինչպես նաև լուծել է Գեղի բնակավայրի ոռոգման ջրի հարցը:

2025թ.-ը ոչ պակաս ակտիվ է եղել Քաջարան համայնքում: Շինարարական մի շարք ծրագրեր են իրականացվել և՛ համայնքային բյուջեով, և՛ սուբվենցիաներով, և բնապահպանական մասհանումներով: Այս անգամ ծրագրերից կառանձնացնենք նախորդ տարի բնապահպանական մասհանումներով Քաջարանում իրականացված երկու ծրագիր:

Քաջարանի համայնքապետարանի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետ Գարեգին Գաբրիելյանը նախքան դրանց անցնելը պարզաբանում է, թե ինչ է իրենից ներկայացնում մասհանումը և ինչպես է այն գոյանում:

- Հանրապետությունում մետաղական հանքավայրերը շահագործող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերից պետական բյուջեով ամեն տարի մասհանումներ են հատկացվում՝ ազդակիր համայնքներին նպատակային ծրագրեր իրականացնելու համար: Մեր դեպքում, որպես այդպիսին՝ ԶՊՄԿ-ն է, որի վճարած բնապահպանական հարկերից էլ մասհանումներ են նախատեսվում համայնքին:

Բնապահպանական մասհանումները նպատակային միջոցներ են և ծախսվում են ըստ օրենքի երկու ուղղությամբ, - ընդգծում է Գարեգին Գաբրիելյանը: Այսինքն, համայնքը գոյացած գումարով կարող է իրականացնել և՛ բնապահպանական, և՛ առողջապահական ծրագիր: Քաջարան համայնքը 2025-ին միաժամանակ երկուսն էլ իրականացրել է:

- **2025-ին բնապահպանական նպատակային միջոցներից 235 մլն դրամի և՛ բնապահպանական, և՛ առողջապահական ծրագրեր են իրականացվել: Նշված 235 մլն դրամից 220 մլն-ը ուղղվել է ջրային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավմանը, մասնավորապես՝ Գեղի բնակավայրի միջով հոսող Պահագետի հոսքի կարգավորման և ջրերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև Քաջարանի ԲԿ-ի կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր են իրականացվել,** - ասում է Գարեգին Գաբրիելյանը:

ԶՊՄԿ-ի վճարած հարկերի շնորհիվ Գեղի բնակավայրում գետի հունն է մաքրվել, հենապատեր են կառուցվել և ամրացում է

Սքանավորի՛ր QR կոդը՝ մանրամասներին ծանոթանալու համար

իրականացվել, 470 մ երկարությամբ ոռոգման ջրի խողովակաշար է անցկացվել, ինչպես նաև սելավատարների արդյունավետությունն է բարձրացվել, ինչը շատ կարևոր է անվտանգության տեսանկյունից:

Քաջարանի ԲԿ-ի տնօրեն Արմեն Ղահրամանյանը՝ մեկ առ մեկ ցույց տալով 2025-ի նոր սարքավորումները, գոհունակությամբ է խոսում համայնքի նախաձեռնությամբ իրականացված ծրագրի մասին: ԲԿ-ի հետ այս ձևաչափով համագործակցությունը ողջունելի է, - նշում է Արմեն Ղահրամանյանը:

«Քաջարանի համայնքապետարանից մեզ առաջարկեցին ԲԿ-ին առաջնային անհրաժեշտության սարքավորումների ցանկ ներկայացնել: Եվ հիմա, ինչպես դուք տեսնում եք, ստացել ենք: Ինչքանով տեղյակ եմ՝ այս ծրագիրը շարունակական կլինի: Որոշ սարքավորումներ առհասարակ չունեինք և այդ ծրագրի միջոցով լրացրեցինք այդ բացը: Որոշների դեպքում ունեինք, պարզապես համալրվեցինք ևս մեկով: Սրտի էլեկտրական ակտիվացման դեֆիբրիլյատորն, օրինակ, նախատեսված է և' հիվանդանոցային պայմանների, և' շտապ օգնության ծառայության համար: Իսկ ահա շարժական ռենտգեն ախտորոշիչը, կարելի է ասել, խիստ անհրաժեշտերից էր: Վիրահատարանի մասին ևս չենք մոռացել: Նոր ձեռք բերված սարքերի մեջ է նաև բազմաֆունկցիոնալ մոնիտորը, որը վիրահատությունների ժամանակ առաջնային է», - ասում է Քաջարանի բժշկական կենտրոնի տնօրենը:

2026թ.-ի համար ևս Քաջարանի համայնքապետարանը կոնկրետ ծրագրեր ունի մշակած, և կրկին դրանք կյանքի կկոչվեն բնապահպանական մասհանումներից գոյացած գումարներով: Քաջարանի համայնքապետարանի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետի խոսքով՝ 2026-ի համար 45 մլն դրամի ծրագիր ենք մշակել: Քաջարանի Տերյան փողոցում պուրակ կկառուցվի: Բացի այդ, այս տարի ևս Քաջարանի ԲԿ-ի կարողությունների զարգացման համար 4 մլն դրամ ենք նախատեսել, նշեց նա:

Հերմինե Միքայելյան

Առողջապահության համընդհանուր ապահովագրություն

2026-ի հունվարի 1-ից Հայաստանում մեկնարկել է առողջության համընդհանուր ապահովագրությունը: Առաջին փուլով շահառու համարվողների ցանկը մեծ է՝ անչափահասները, 65 և ավելի տարեկան քաղաքացիները, հաշմանդամություն ունեցողները, սոցիալական տարբեր խմբերում ներառվածները ու նաև 200.001 դրամ (ներառյալ հարկերը) և ավելի աշխատավարձ ստացողները: Ներկայացնենք, թե ինչպես է ձևավորվում որոշ խմբերի համար ապահովագրավճարի հաշվարկը:

Պարտադիր ապահովագրության ամսական արժեքը 10.800 դրամ է:

200.001-500.000 դրամ աշխատավարձ ստացողների ապահովագրավճարի հաշվարկը.

200.001-500.000 դրամ աշխատավարձ ստացողների դեպքում ապահովադիրը վճարելու է ընդամենը 300 դրամ:

Մինչև 2026 թվականը 200-ից 500 հազար դրամ աշխատավարձ ստացողները Զինապահ հիմնադրամին վճարում էին 5500 դրամ, այս տարվանից կվճարեն 1000 դրամ: Մնացած 4.500 դրամը կուղղվի ապահովագրության նպատակին: Այս տարի պետությունը 6.000 դրամ սուբսիդիա կտրամադրի այս ենթախմբի շահառուներին: Այսպիսով՝ ապահովագրավճարը կձևավորվի այս սխեմայով

4.500 + 6000 + 300 = 10.800

500.001-ից 1 մլն. դրամ աշխատավարձ ստացողների ապահովագրավճարի հաշվարկը.

500.001-ից 1 մլն. դրամ աշխատավարձ ստացողները ապահովագրության համար կվճարեն 3.300 դրամ: Այս դեպքում Զինապահ հիմնադրամին վճարվող 8.500 դրամից 7500-ը կուղղվի ապահովագրության վճարին:

Սխեմա (500 հազարից մինչև 1 մլն դրամ ստացողների դեպքում)՝

7.500 + 3.300 = 10.800

2027 թվականից քաղաքացիները ապահովագրության համար վճարումները կարող են հետ ստանալ սոցիալական կրեդիտի տեսքով, եթե հայտարարագրեն իրենց եկամուտները:

Սքանավորի՛ր QR կոդը՝ համընդհանուր ապահովագրության համակարգի մասնակցներին ծանոթանալու համար

ԶՊՄԿ-ի ցկերը՝ ազդակիր Սևաքար բնակավայրին

Կառուցման տարածաշրջանի Սևաքար բնակավայրում պաշտոնապես բացվեց հանդիսությունների սրահը: Այն վերանորոգվել է 2024 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակում՝ համայնք-կառավարություն համաֆինանսավորմամբ՝ շուրջ 31 մլն 500 հազար դրամ ներդրմամբ, որում համայնքի մասնաբաժինը՝ շուրջ 13 մլն-ը, ֆինանսավորել է ԶՊՄԿ-ն: Նորաբաց սրահն ամբողջությամբ կահավորելու, անհրաժեշտ գույքով, պարագաներով ապահովելու հարցում ևս համայնքին աջակցել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ շուրջ 4 մլն 600 հազար դրամով: Ընդհանուր առմամբ, Սևաքարի հանդիսությունների սրահի նորոգման և կահավորման նպատակով ԶՊՄԿ-ն ներդրել է շուրջ 18 մլն դրամ:

Սևաքարի կենտրոնից տարածվող խորոված՝ բույրն ու երաժշտությունը հուշում են՝ այստեղ կարևոր իրադարձություն է տեղի ունենում: Խորհրդային տարիներին որպես դպրոց ծառայող շենքի տարածքում այժմ հիմնանորոգված հանդիսությունների սրահն է: 2026-ի առաջին կարմիր ժապավենը կտրվում է Սևաքարում:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի տեղակալ Արմեն Ստեփանյանն ու Սևաքարի վարչական ղեկավարը ծափերի ներքո հանդիսավորությամբ ազդարարում են բացումը:

«Անցյալ տարի նաև ներկա էի Չափնի բնակավայրում այստեսակ բացմանը: Ազդակիր համայնքների սոցիալական ծրագրերում մեր

ընկերությունը հստակ է: Առաջնահերթություն ենք տալիս առողջապահական, կրթական, սպորտային նախագծերին, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերին», - նշում է Արմեն Ստեփանյանը:

Առհասարակ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը Կապանում իրականացվող սուբվենցիոն ծրագրերում բավականին ակտիվ մասնակցություն ունի: Միայն նախորդ տարի՝ 2025-ին, դրանք մեկ տասնյակից ավելին էին:

Սևաքարի կենտրոնում հավաքվել են մեծ ու փոքր համագյուղացիները, ինչպես նաև հարևան բնակավայրերից մարդիկ են եկել մասնակցելու միջոցառմանը:

Սևաքարցի Սամվել Գրիգորյանը շատերի պես երազում է տեսնել գյուղի

Սքանավորի՛ր QR կոդը՝ մանրամասներին ծանոթանալու համար

երբեմնի աշխուժությունը՝ փակ դռները բացվեն, արտերկրում աղրող սևաքարցիները՝ հետ գան ծննդավայր: Հանդիսությունների սրահը գյուղաբնակների համար կարևոր է: Երբեմն ստիպված են քաղաք հասնել ինչ-որ միջոցառում կազմակերպելու համար:

Հիմնանորոգված հանդիսությունների սրահում ավելի շատ հարսանիք ու բանակ ճանապարհելու միջոցառումներ պետք է անցկացվեն, ուրախության առիթները անպակաս լինեն, - ժպիտով իրար մեջ ասում-խոսում են գյուղաբնակները: Իսկ այդ ընթացքում խորոված՝ հասցնում է ախորժելի տեսք ստանալ, և սրահի երկար ու ճիգ սեղաններն էլ՝ լցվեն գյուղական համեղ ուտեստներով:

Կապանի գյուղական բնակավայրերում հանդիսությունների սրահների հիմնանորոգման և վերաբացման ծրագիրը մեկնարկել է համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ: Համայնքը հաշվի է առել բնակիչների ցանկությունները, կարևորել և շեշտը դրել հեռավոր բնակավայրերի վրա:

Վերջին մի քանի տարիներին հանդիսությունների սրահներ են վերաբացվել Եղվարդում, Վերին Խոտանանում, Ծավում, Չափնիում, այսօր արդեն՝ Սևաքարում: Առաջիկայում լիովին հիմնանորոգված հանդիսությունների սրահի բացումը կտոնեն նաև Ճիկահողում, - նշում է Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Հարությունյանը:

Հերմինե Միքայելյան

Լուսանկարը՝ Բեյրոնա Մարտիրոսյանի

Հայաստանում COP17

COP17-ը՝ Կենսաբանական բազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովն, որը կոչվում է նաև UN Biodiversity Conference 2026 (CBD COP17), կանցկացվի 2026 թ. հոկտեմբերի 18-30 Հայաստանում՝ Երևանի «Մերիդիան» էքսպո կենտրոնում:

Համաժողովի նշանակությունը

COP17-ը չի վերաբերվում միայն կլիմայի փոփոխությանը), այլ՝ կենտրոնացած է կենսաբազմազանության պահպանման վրա: Այս համաժողովը միջազգային կարևոր հարթակ է՝ ամբողջ աշխարհի երկրներին միավորելու համար բնության, էկոհամակարգերի, կենսային ռեսուրսների պահպանման, վերականգնման և կայուն օգտագործման շուրջ:

Հայաստանը՝ որպես հյուրընկալող երկիր

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը ստացավ COP17-ի կազմակերպման իրավունքը 2024 թվականի հոկտեմբերին COP16-ի ընթացքում: Դա համարվում է նշանակալի իրադարձություն, քանի որ համաշխարհային մակարդակի կարևոր բնապահպանական համաժողովը Հայաստանում կհամախմբի ավելի քան 160 երկրներից կենսաբազմազանության և բնապահպանության ոլորտի հարյուրավոր մասնակիցների:
COP17-ի պաշտոնական տարբերանշանը ներկայացնում է Polyommatus eriwanensis (երևանյան կապույտ թիթեռը), որը հանդիպում է Երևան քաղաքի շրջակայքում: Այն խորհրդանշում է բնության բազմազանությունը և համաժողովի հիմնական գաղափարը՝ «Taking action for nature» (գործողություններ բնության համար) կարգախոսի ներքո:

Կազմակերպչական աշխատանքներ

Հայաստանում արդեն սկսվել են համաժողովի կազմակերպման աշխատանքները: COP 17-ի համար ՀՀ բյուջեից հատկացվել է ավելի քան 5,5 մլրդ դրամ (մոտ 15.2 մլն դոլար)՝ ենթակառուցվածքների բարելավման նպատակով:

Ինչո՞ւ է COP17-ը կարևոր

COP17 Հայաստանում գնահատվում է որպես մեծ հնարավորություն՝ համաշխարհային բնապահպանական օրակարգի վրա կենտրոնանալու, աշխարհի երկրների համագործակցությունն ուժեղացնելու, գիտական, մասնագիտական և երիտասարդական համայնքների ներգրավվածությունն ապահովելու և Հայաստանի միջազգային դերակատարությունը մեծացնելու առումներով:
Մարդը հաճախ կարծում է, որ նյութական հարստությունը ապագայի գլխավոր երաշխիքն է, սակայն բնությունն ունի իր անփոփոխ օրենքները: Մեր գոյությունը կախված է այն կենսաբազմազան աշխարհից, որը մեզ համար սնունդ, մաքուր ջուր և թթվածին է ապահովում: Կենսաբազմազանությունը մոլորակի իրական հարստությունն է, և նրա կորուստը նշանակում է մարդու առողջության ու ապագայի կորուստ: Երկիր մոլորակը նման է հսկա փազլի. եթե մի կտոր կորցնենք, ամբողջ պատկերը վնասվում է:
Բնական ռեսուրսները պետք է օգտագործել խելամիտ և հաշվարկված ձևով: Հանքարդյունաբերությունը կարող է դառնալ երկրի տնտեսական շարժիչ ուժ, բայց միայն այն դեպքում, երբ իրականացվում է պատասխանատու մոտեցմամբ, ինչին և ձգտում է համաշխարհային առաջադեմ հանրությունը: Ծրագրեր են իրականացվում արդյունաբերության հատնանքով օդի և ջրի աղտոտումը նվազեցնելու ուղղությամբ՝ օգտագործելով շրջակա միջավայրին վնաս չպատճառող տեխնոլոգիաներ, ինչպես նաև արդյունաբերական շրջաններում մեծացնելով հողի վերականգնման ու կանաչապատման աշխատանքները: Այդպիսի մոտեցումն օգնում է միաժամանակ զարգացնել տնտեսությունը և պահպանել բնությունը:
Աշխարհի շատ երկրներ արդեն համոզվել են, որ բնապահպանությունն ու տնտեսությունը հակառակ կողմերում չեն: Երբ արդյունաբերական գործունեությունն իրականացվում է համայնքների մասնակցությամբ, գիտական վերահսկմամբ և բնության հանդեպ հարգանքով, ստեղծվում է խելացի հավասարակշռություն: Այդպիսի ճանապարհով հնարավոր է ունենալ և՛ աշխատանքային հնարավորություններ, և՛ կենսունակ բնություն, և՛ ապագա, որտեղ մարդն ու միջավայրը գոյակցում են ոչ թե պայքարով, այլ համագործակցությամբ: **Կայուն զարգացումը ոչ թե ընտրություն է, այլ միակ ուղին՝ առողջ մոլորակի վրա ապրելու համար:**

Կարմրագլուխ ոտաբեր / Ardea purpurea

Տառեղ՝ Կապանի սպիտակափետուր հյուրը

Հնչ թռչունի հետ ասես, որ չեն շփոթել կապանցիները սպիտակ մեծ տառեղին՝ ձկնկուլ, արագիլ, կռունկ, բալկան... Սակայն քաղաքի այս օրերի ամենասիրված հյուրը հենց սպիտակ մեծ տառեղն է՝ ջրաճահճային խոշոր թռչուն, որը Հայաստանում հիմնականում հանդիպում է Սևանա լճի ափերին, Արաքսի հովիտներում, իսկ վերջին տարիներին նաև՝ Սյունիքի գետային հատվածներում: Այն առանձնանում է սպիտակ փետրավորությամբ, երկար վզով, սուր կտուցով ու մուգ կամ սև ոտքերով: Արդեն շուրջ երեք տասնյակ առանձնյակ է նկատվել Ողջիի ափերին:

Վերջին տարիներին Ողջին վերածվում է ոչ միայն քաղաքային բնաոատկերի գեղեցիկ բաղադրիչի, այլև կենսաբազմազանության կարևոր օջախի: Տարածաշրջանի մեղմ կլիման, մաքուր ջրային միջավայրը, հարուստ բուսականությունն ու կենդանական աշխարհը նպաստավոր պայմաններ են ստեղծում տարբեր տեսակների, այդ թվում՝ հազվադեպ հանդիպող թռչունների համար: Մասնագետները նշում են, որ նման երևույթները վկայում են բնության առողջ վիճակի մասին:

«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի բաժնի մասնագետ **Գոռ Նավասարդյանի** խոսքով՝ թռչունների առկայությունն ու բազմազանությունը բնապահպանական վիճակի ամենազգայուն ցուցիչներից մեկն է: «Թռչունները առաջիններից են արձագանքում միջավայրի փոփոխություններին: Եթե որևէ տարածքում նկատվում է նրանց քանակի աճ կամ ի հայտ են գալիս նոր տեսակներ, դա նշանակում է, որ տեղի էկոհամակարգը կենսունակ է, ունի բավարար սննդային պաշար, մաքուր ջուր և անվտանգ միջավայր: Մասնավորապես ջրաճահճային թռչունները, ինչպիսին է սպիտակ մեծ տառեղը, պահանջկոտ են իրենց կենսամիջավայրի նկատմամբ, և նրանց ներկայությունը վկայում է Ողջի գետի էկոլոգիական վիճակի բարելավման մասին», - ընդգծում է մասնագետը:

Սյունիքի տարածաշրջանի բնական պայմանները՝ լեռնային մաքուր օդը, խոնավ միջավայրերը, գետերի առկայությունն ու հարուստ բուսածածկը, ստեղծում են այնպիսի համադրություն, որը նպաստում է ոչ միայն տեղական, այլև չվող տեսակների անվտանգ կանգառներին:

Քաղաքի բնաոատկերը փոխած և շատերին հիացրած տառեղները դեռ մի քանի ամիս կիյուրընկալվեն Կապանում, սակայն այստեղ չեն բնադրվի: Գարնան կեսին սերունդներ տալու համար նրանք կշարունակեն իրենց ճանապարհը, իսկ աշնանը հնարավոր է վերադառնան արդեն ավելի մեծ ընտանիքներով:

Անի Գրիգորյան

«Երբ զարգացումն ու անվտանգությունը սկսվում է գիտելիքից»

Հարցազրույց ԶՊՄԿ ուսումնական կենտրոնի ղեկավար **Մարինե Ղահրամանյանի** հետ

- Տիկին Ղահրամանյան, ինչպե՞ս և ինչ նպատակով ստեղծվեց ԶՊՄԿ ուսումնական կենտրոնը:

2023 թվականի մարտին՝ վարչական դեպարտամենտի ղեկավարի նախաձեռնությամբ ձևավորվեց Ընկերության ուսումնական կենտրոնը: Գաղափարի հիմքում շատ պարզ, բայց կարևոր համոզմունք էր՝ անվտանգ և կայուն արտադրությունը սկսվում է գիտելիքից: Մենք ուզում էինք ունենալ ոչ թե ուղղակի ուսուցում առաջարկող կառույց, այլ միջավայր, որտեղ աշխատակիցը կարող է ստանալ իրական աջակցություն, հասկանալ Ընկերության պահանջները ու շարունակաբար զարգանալ, որտեղ փորձը փոխանցվում է գիտելիքի, գիտելիքը՝ անվտանգ և հմուտ աշխատանքային միջավայրի ձևավորման:

Տեսեք, շատ կարևոր է յուրաքանչյուր գործընթացի կանոնավոր կազմակերպումը, անմիջական կապը ստորաբաժանումների ղեկավարների և նրանց աշխատակիցների հետ, ովքեր պատրաստվում են ատեստավորումներին, ձեռք են բերում նոր հմտություններ և ամրապնդում մասնագիտական գիտելիքները՝ իհարկե, հանձնելով քննական թեստերը:

- Եթե խոսենք թվերով, ի՞նչ ծավալի աշխատանք է կատարվել վերջին տարիներին:

- Ստեղծման պահից մինչև այսօր, կենտրոնը գործել է ակտիվ ռեժիմով: Միայն վերջին մեկ տարում ուսուցման ծրագրերին մասնակցել է ավելի քան 4 000 աշխատակից: Ունեցել ենք 254 ուսումնական սեսիա, սեմինար և դասընթաց, շուրջ 2 000 մասնակից և ընդհանուր առմամբ՝ 865 ուսումնական ժամ:

- Իսկ եթե ավելի պարզ, ապա թվերի հետևում հազարավոր ժամեր են՝ շփման, փորձի փոխանակման և միասին աճելու ճանապարհին:

- Ո՞ր ուղղություններով են հիմնականում իրականացվում ծրագրերը:

- Ծրագրերը ուղղված են ատեստավորումներին, պարտադիր և սերտիֆիկացիոն ուսուցմանը պատրաստվելուն, մասնագիտական ու տեխնիկական հմտությունների զարգացմանը, անվտանգության և սարքավորումների հետ ճիշտ աշխատանքի ապահովմանը:

Կիրառում ենք տարբեր ձևաչափեր՝ առկա, առցանց և համակցված: Դասընթացներն իրականացնում են թե՛ մեր փորձագետները, թե՛ հրավիրված մասնագետները:

- Ատեստավորումը հաճախ ընկալվում է որպես դժվար փուլ: Ինչպե՞ս են մեր աշխատակիցները դրան վերաբերվում:

- Ատեստավորումը զարգացման հարթակ է: Մեր գործընկերները գիտակցում են, որ մասնագիտական առաջընթացի համար անհրաժեշտ է արձանագրել ներուժն ու կոնկրետ պաշտոնի համար անհրաժեշտ փորձառություն ունենալ կամ ձեռք բերել:

ՈՒԿ հիմնված օրից մինչ այսօր 1734 աշխատակից արդեն անցել է ատեստավորում: Ոմանք հաստատել են իրենց բարձր պատրաստվածությունը, իսկ մյուսների համար ատեստավորումը իրենց մասնագիտական գիտելիքները զարգացնելու նպատակ է ձևավորել:

- Ի՞նչ է տեղի ունենում արդյունքների ամփոփումից հետո:

- Ատեստավորման արդյունքները ներկայացվում են ղեկավարներին: Դրանց հիման վրա պլանավորվում են լրացուցիչ ուսուցումներ, պատրաստում կրկնակի գնահատման և ստեղծվում մասնագիտական առաջխաղացման իրական հնարավորություններ:

- Ինչպե՞ս է իրականացվում սերտիֆիկացման գործընթացը:

2025 թվականին սերտիֆիկացում է անցել 1 089 աշխատակից: Սա հատկապես կարևոր է բարձր ռիսկայնությամբ տեղամասերում և հատուկ տեխնիկայով աշխատողների համար: Սերտիֆիկացումն ապահովում է, որ նրանք ժամանակին ունենան անհրաժեշտ թույլտվություններ և անվտանգ աշխատեն բարձր ռիսկայնությամբ միջավայրում:

- Կոմբինատում գործում է նաև թեկնածուների թեստավորման համակարգ:

- Այո՛, արդեն երեք տարի է ներդրված է թեկնածուների թեստավորման համակարգը: Այն կիրառվում է թե՛ աշխատանքի ընդունման, թե՛ ներքին տեղաշարժերի ժամանակ: Սա մեզ օգնում է դեռևս առաջին աշխատանքային օրից նվազեցնել ռիսկերը և կադրային հավասարակշռված որոշումներ կայացնելու հիմքեր է տալիս:

-Այստեղ պետք է խոսեմ ուսումնական կենտրոնի իրականացրած եզակի ծրագրի մասին, որը նաև կարող ենք դիտարկել Ընկերության սոցիալական պատասխանատվության շրջանակում:

-2024 թվականին, ազդակիր համայնքներից երիտասարդների վերապատրաստման ծրագիր իրականացրեցինք, 3 ամիս տևողությամբ:

- փականագործ (13 շրջանավարտ)
- էլեկտրիկ (20 շրջանավարտ)
- խառատ (12 շրջանավարտ)
- Ամբողջական ծրագիրը բաղկացած էր տեսական և գործնական փուլերից, որից հետո թեստավորման արդյունքում մասնակիցները ստացան համապատասխան հավաստագրեր:

Ծրագրի միջոցով Ընկերությունը նպատակ դրեց զարգացնել տարածաշրջանում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները՝ ստեղծելով ավելի ինքնուրույն և մրցունակ մասնագիտական միջավայր:

- Անելիքներ՝ 2026 թ. համար:

- Ընթացիկ տարում նախատեսում ենք՝

- զարգացնել ներքին թրեյներների համակարգը
- ուժեղացնել գործնական պատրաստվածությունը ատեստավորումներից առաջ
- ներդնել ներքին սերտիֆիկացում և որակավորման չափորոշիչներ
- ակտիվ աշխատել կադրային ռեզերվի և տաղանդների հետ
- ընդլայնել համագործակցությունը կրթական հաստատությունների հետ:

- Ուսումնական կենտրոնի հիմնական առաքելությունը:

- Ձևավորել ուսուցման ժամանակակից համակարգ, որտեղ յուրաքանչյուր աշխատակից զգում է աջակցությունը, հասկանում է պահանջները և տեսնում է մանագիտական զարգացման իր ճանապարհը: Մենք հստակ քայլերով առաջ ենք գնում և հաջողություններ դեռ կգրանցենք՝ գործընկերների հետ համատեղ ջանքերով:

Հենց այս պահին ՈՒԿ սերտ համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն հետ:

ՈՒԿ նպատակ ունի տալ այնպիսի ուսուցում, որի մակարդակը համապատասխանի պետական որակավորմանը:

Լիլիթ Իսրայելյան

ԶՊՄԿ-Ն ՁԵՌՔ ԲԵՐԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ Komatsu PC 4000 ՄԱԿՆԻՇԻ ԷՍԿԱՎԱՏՈՐԸ

	PC 2000	PC 3000	PC 4000
Շարժիչի հզորություն	1,044 ձ.ու.	1,260 ձ.ու.	1,875 ձ.ու.
Գործառնական քաշ	202 տ	258 տ	395 տ
Շերեփի տարողություն	12մ³	15մ³	22մ³
Բարձման ցիկլը HD785-ի համար	6 շերեփ	4 շերեփ	3 շերեփ

ԶՊՄԿ-Ն 2026թ-ը սկսում է արդեն իսկ առաջընթացի մեծ քայլով: Հանքարդյունաբերության ոլորտի ժամանակակից մոտեցումներին համահունչ է շարժվում Հայաստանի խոշոր հարկատուն: Արտադրական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերը հետևում են մեկը մյուսին: Այս անգամ ձեր ուշադրությունն ենք հրավիրում ձեռնարկության կյանքում աննախադեպ ներդրումային ծրագրի վրա, որը մեծ ոգևորություն է առաջացրել ԶՊՄԿ-ում: Հայաստանում և առհասարակ տարածաշրջանում առաջին Komatsu PC 4000 մակնիշի էսկավատորը այս տարի ձեռք բերեց հենց ԶՊՄԿ-Ն:

Komatsu PC 4000 -ի մոնտաժման աշխատանքները սկսվեցին հունվարի սկզբին և դեռևս շարունակվում են: Չնայած եղանակային բարդ պայմաններին՝ ԶՊՄԿ-ի բաց հանքի տարածքում հսկա տեխնիկայի մոնտաժման աշխատանքներն ընթանում են լայն թափով՝ անվտանգության կանոններին խիստ հետևելով: «ԻԿՕ Մաշինների» ՍՊ ընկերությունը, որը հանդիսանում է «Կոմացու» ընկերության պաշտոնական մատակարարը, հայաստանյան ներկայացուցիչներին գործուղել է ԶՊՄԿ: Պրոֆեսիոնալ մասնագետներից բաղկացած խումբը հսկա էսկավատորի մոնտաժման աշխատանքները ավարտին կհասցնի ահմանված ժամկետում՝ փետրվարի կեսերին:

Տեղական բեմից՝ աշխարհի քաղաքակրթական կենտրոններ՝ հյուրախաղեր, որոնք փոխում են երեխաների աշխարհընկալումը

Լիլիթ Իսրայելյանի հարցազրույցը՝ Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի դերասան, գեղարվեստական ղեկավար **Արթուր Գաբրիելյանի** հետ

Ինչպե՞ս սկսվեց Ձեր ճանապարհը թատրոնում, և ե՞րբ հասկացաք, որ բեմը Ձեր կոչումն է:

-Հետաքրքիր է, բայց հարցի պատասխանը միայն վերջերս կարողացա հասկանալ: Երևի, իմ արվեստով ինչ-որ բան էի ուզում փոխել աշխարհում, գեղեցկություն բերել և այդ հարթակը թատրոնն էր: Թատրոնը գեղեցկացնում է մարդուն, գեղեցկացնում է աշխարհը և մի փոքր բարություն է բերում: Թատրոնը լավագույն հարթակն է՝ աշխարհին ուզածդ փոխանցելու համար:

Թատրոնը նվիրյալների միջավայր է, կենդանի օրգանիզմ է, կարող է քեզ շնորհներով օծել, նաև՝ պատժել: Եթե չնվիրվես անկեղծորեն և ամբողջովին՝ թատրոնը քեզ սիրով չի փոխհատուցի:

«Դերասանի գործը՝ առավոտից մինչ մայրամուտ, մշակի աշխատանք է»,- մեջբերեմ մեծն Սոս Սարգսյանին: Եվ այսօր, այդպիսի նվիրյալներ շատ ունենք...

-Ի՞նչ նշանակություն ունի Կապանի դրամատիկական թատրոնը Ձեր ստեղծագործական կյանքի համար:

-Կապանի դրամատիկականն այն վայրն է, որն ինձ էներգիա է տալիս, օգնում ստեղծագործել, այն իմ Տունն է, Հայրենիքն է, Մայրն է ...

2012 թվականից եմ Կապանի թատրոնում, զինվորական ծառայությունս անցնում էր Կապանում և մնացի այստեղ: Մեծ սիրով ու ջերմությամբ էի շրջապատված դերասանների, հանդիսատեսի կողմից, դա իհարկե, փոխադարձ ջերմություն էր, և ես էլ սիրեցի Կապանի թատրոնն ու Կապան քաղաքը:

> Դերասանը՝ ուսուցիչ, թատրոնը՝ ընտրություն և աղագա

-Ե՞րբ և ինչպե՞ս ծնվեց թատերարվեստ դասավանդելու գաղափարը:

-Դեռ իմ զինվորական ծառայության տարիներին Կապանում թատերարվեստ էի դասավանդում, ասեմ նաև, որ այդ ընթացքում թատերական ինստիտուտը Կապանում մասնաճյուղ բացելու նպատակ ուներ: Իմ առաջին սաները հաջողությամբ ընդունվեցին մասնաճյուղ և այդտեղից սկսվեց իմ կյանքում դասավանդելու գործընթացը: Իմ սաներից Տիգրան Ղուկասյանն է, ով նաև դասավանդում է Քաջարանի արվեստի դպրոցում, նաև շատ-շատերը՝ հանրապետության այլ քաղաքներում և թատրոններում:

Առաջարկ ստացա՝ Կապանի արվեստի դպրոցում թատերարվեստի բաժին բացելու, նախաձեռնությունը տնօրեն Մարինա Նահապետյանին էր:

Քաջարանի արվեստի դպրոցի տնօրեն Արմինե Թումանյանը հրավիրեց Քաջարան՝ կրկին նույն առաջարկով: Գիտակցում էի, որ Քաջարանի երեխաների համար շատ բան կփոխվի թատերարվեստի բաժին բացելով, թատրոնը արվեստի այն տեսակն է, որով զբաղվելով՝ երեխաները նախ և առաջ կուսումնասիրեն բոլոր հիմնաքարերը. լավ քաղաքացիներ, կիրթ մարդիկ դառնալու, և ստանձնեցի այդ պատասխանատվությունը:

Այսօր արդեն 120 աշակերտ ունենք, 60 -նն էլ ավարտել են: Նրանք հաջողակ են իրենց ընտրած մասնագիտության մեջ, համոզված եմ՝ ինտելեկտուալ և զարգացած քաղաքացիներ են:

Ընդգծեմ, որ այս ամենի արդյունքում արվեստի դպրոցները դարձան մասնագիտական կողմնորոշում տվող, ուղղորդիչ կրթական հաստատություններ: Մենք կարողացանք երեխաներ ընտրել և ուղղորդել նրանց դեպի թատերական բարձրագույն կրթություն, դա արդեն կարևոր քայլ էր, և գործող թատրոն ունեցող քաղաքի համար՝ հիանալի նորություն: Իմ աշակերտներից երկուսը, կրթություն ստանալուց հետո վերադարձել են և աշխատում են մեր թատրոնում:

Քաջարանում կար երաժշտական դպրոց, բայց չկար թատերարվեստ և հենց կոնկրետ Քաջարանի օրինակով ասեմ, որ լեռնային արդյունաբերական այս քաղաքում, թեև կար համերգային կուլտուրան, բայց չկար թատերական կուլտուրան, որը, վստահեցնում եմ, սկսեց զարգացում առրել: Իսկ թատրոնը սինթետիկ արվեստ է՝ ներառում է արվեստի տարբեր ճյուղերը....

Համագործակցություն, որը տալիս է արդյունք՝ կոմբինատի հովանավորությամբ և համայնքի նախաձեռնողականությամբ

-Ձեր սաների հետ հյուրախաղերով եղել եք տարբեր երկրներում, հաջողություններ գրանցած վերադարձել և այստեղ շատ կարևոր է հովանավորների դերը՝ ՁՊՄԿ-ն որպես ֆինանսական աջակից և Քաջարանի համայնքապետարանը՝ որպես նախաձեռնող:

-Երեխաների մտահորիզոնն ընդլայնվում է, երբ նրանք տարբեր երկրներում քաղաքակրթության օրրանները են տեսնում, և իհարկե՝ իրենց հետ բերում գեղագիտություն և էսթետիկա:

Այս առումով Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը մեր կողքին էր, ով հավանություն տվեց մեր ծրագրերին և արդյունաբերական հսկայի ֆինանսական աջակցությունը ստացանք: **Սերտ համագործակցության օղակ է ձևավորվել՝ Քաջարանի արվեստի դպրոց-համայնքապետարան-ՁՊՄԿ: Ընկերությունը, քաղաքի երեխաների կողքին է՝ սոցիալական պատասխանատվության համատեքստում:**

Երբ համայնքը հավատում է իր երեխաներին

Տարբեր սերունդներ ենք տարել հյուրախաղերի, հնչեցրել Քաջարանի անունը աշխարհի տարբեր բեմերում, տեսել տարբեր քաղաքներ, վերցրել լավն ու կարևորը և վերադարձել. Մարսել, Վառնա, Փարիզ, Պետերբուրգ, Թբիլիսի և այդպես շարունակ...

Այս կապակցությամբ շնորհակալություն բոլորին՝ մեր գաղափարներին հավանություն տալու և աջակցելու համար:

Եվ, հավատացեք, հենց սա է փոխում քաղաքի դիմագիծը՝ լեռնային հանքարդյունաբերությամբ զբաղվող քաղաքը դառնում է նաև մշակույթի օջախ:

Լիլիթ Իսրայելյան

Հարցազրույցն ամբողջությամբ դիտելու համար՝ սքանավորիր QR

Արհեստակցական միությունը՝ աջակցություն, հոգատարություն

Տիգրան Սարգսյան

Արհեստակցական միությունները չեն սահմանափակվում փաստաթղթերով և կանոնակարգերով. դրանք աշխատող մարդկանց կյանքի մի մաս են՝ աջակցելով ամենօրյա դժվարությունների հաղթահարման գործում:

«Մեր նպատակը ընկերության աշխատակիցների և նրանց ընտանիքների կյանքի որակը բարելավելն է», - ասում է ԶՊՄԿ արհեստակցական միության ղեկավար Տիգրան Սարգսյանը՝ պատասխանելով մեր հարցերին:

2025-ը՝ մարտահրավերների և հաջողությունների տարի

-Ի՞նչ նախաձեռնություններ իրականացրեց կազմակերպությունը 2025 թվականին:

-Տարվա սկիզբը ծանր էր, բայց միությունը չընկրկեց: Ամենամյա ծրագրերը շարունակվեցին՝ հուսալիորեն և համակարգված: Մեր գործունեությունը միտված է այն բանին, որ աշխատակիցները զգան, որ միությունը իրենց կողքին է, պատրաստ է աջակցել և աջակցել սոցիալական պաշտպանություն:

-Ո՞ր դեպքերում է աշխատակցին տրամադրվում միանվագ աջակցություն:

-Միանվագ նպաստներ տրամադրվում են չորս հիմնական դեպքերում. օրինակ՝ ամուսնության ժամանակ աշխատակիցը ստանում է 100 հազար դրամ: 2025-ին արձանագրվել է 44 ամուսնություն, իսկ եթե ամուսնացողները երկուսն էլ աշխատակից են, նպաստը ստանում են երկուսն էլ: Գումարը գուցե մեծ չէ, բայց նորաստեղծ ընտանիքի համար դա հաճելի նվեր է արհմիությունից:

-Ի՞նչ աջակցություն է տրամադրվում երեխաների ծննդյան և զորակոչի դեպքում:

-Տարվա ընթացքում ծնվել է 191 երեխա, որոնց ծնողները ստացել են համապատասխան աջակցություն: Յուրաքանչյուր նորածին բալիկ արհմիությունից ստանում է 80 հազար դրամ: Երեխայի խնամքի նախնական ծախսերի համար դա լավ աջակցություն է, և ծնողները գոհունակությամբ են այն ընդունում: Նույնքան գումար՝ 80 հազար դրամ, տրվում է, երբ աշխատակցի երեխան զորակոչվում է բանակ: 2025 թվականին մեր աշխատակիցներից 43-ը զավակին ճանապարհել են բանակ և ստացել այդ միանվագ նպաստը:

Եվ իհարկե, միայն երջանիկ իրադարձությունների ժամանակ չէ, որ պետք է լինենք մեր աշխատակիցների կողքին: Ընտանիքում կորուստը՝ և՛ հոգեկան, և՛ ֆինանսական առումով, նույնպես դժվարություններ է առաջ բերում: Մենք փորձում ենք ինչ-որ չափով աջակցել. տրվում է աշխատակցի հարազատի մահվան դեպքում 70 հազար դրամ, իսկ աշխատակցի մահվան դեպքում՝ 150 հազար դրամ: 2025-ին, ցավոք, արձանագրվել է հարազատի 91 մահ և 8 աշխատակցի մահ, և միությունը հետևողականորեն կանգնած է եղել ընտանիքների կողքին:

Հոգատարություն՝ յուրաքանչյուրի համար

-Կա՞ն արդյոք մշտական ծրագրեր, բացի միանվագ աջակցություններից:

-Այո, կցանկանայի հատկապես շեշտել հանգստյան ուղեգրերը, որոնք տրամադրվում են համաֆինանսավորմամբ կամ անվճար՝ ստաժով պայմանավորված.

- 1-5 տարի ստաժ - 50% վճարում է աշխատակիցը, 50%՝ կազմակերպությունը
- 5-10 տարի - 40%՝ աշխատակիցը, 60%՝ կազմակերպությունը
- 10-20 տարի - 30%՝ աշխատակիցը, 70%՝ կազմակերպությունը
- 20-30 տարի - 20%՝ աշխատակիցը, 80%՝ կազմակերպությունը
- 30+ տարի - տրամադրվում է ամբողջությամբ անվճար

2025-ին մոտ 1900 մարդ օգտվել է այս ծրագրից: Ուղեգրերը տրամադրվում են Ջերմուկ, Արզնի և Վանաձոր քաղաքների առողջարանների համար՝ հաշվի առնելով բուժման և հանգստի նպատակները: Եվ պետք է ասեմ, որ մեր աշխատակիցները շատ գոհ են այս ծրագրից:

-Ի՞նչ ծրագրեր կան երեխաների համար:

-Սեպտեմբերին ավանդաբար մանկապարտեզների ավագ խմբերին տրամադրվում ենք պայուսակներ՝ դպրոցականի համար անհրաժեշտ գրենական պիտույքներով, և ամեն տարի մոտ 100 երեխա ստանում է այդ սեպտեմբերմեկյան նվերը: Շատ տպավորիչ է, հուզիչ, թե ինչպես են դա ընդունում փոքրիկները՝ ինչպիսի ուրախությամբ և դպրոցական դառնալու պատասխանատվության զգացումով:

Իհարկե, կարելի էր տոնական օրերին և ամեն գեղեցիկ առիթով

աջակցություններ հատկացնել, բայց, բնականաբար, միջոցները սահմանափակ են: Ասենք, Մարտի 8-ին բոլոր կին աշխատակիցներին տրամադրվում է 20 հազար դրամ և ծաղիկ: Փոքրիկ բան է, բայց հաճելի է այդ օրը տեսնել մեր կին աշխատակիցներին՝ բոլորի ձեռքին ծաղիկ և ժպիտներ դեմքերին: Հասկանալի է դառնում, որ անկախ նվերի մեծությունից, դա անհրաժեշտ է, քանի որ անգամ փոքր նվերը մեծ ուշադրության և հարգանքի նշան է: Իսկ նոր տարվա տոներին աշխատակիցների համատեղ ամանորյա խնջույքի համար տրամադրվեց մոտ 5 միլիոն դրամ:

Ունենք նաև կրթամշակութային նախաձեռնություններ:

-Օրինակ, 2026 թվականի փետրվարից կվերագործարկվի արհմիության նոր գրադարանը՝ մոտ 10 հազար գրքով: Այն նախատեսված է հիմնականում բարձր դասարանների աշակերտների և ուսանողների համար, ֆոնդը պարբերաբար թարմացվելու է՝ ըստ պահանջարկի: Սա շատ կարևոր բան է, հատկապես այն առումով, որ երիտասարդները ակտիվորեն օգտվում են գրադարանից, և հասկանալի է, որ դրա կարիքը կար:

Կարևոր եմ համարում նշել, որ տարվա ընթացքում երկու անգամ 100 հազար դրամ տրամադրվում է զոհվածների ընտանիքներին, օգտվողների թվում՝ 63 ընտանիք է:

-Ինչպե՞ս կարող են աշխատակիցները տեղեկանալ ծրագրերի մասին:

-Աշխատակիցները դիմում են արհմիության արտադրամասային նախագահներին: Ունենք 15 հոգանոց բյուրո, որն ամիսն առնվազն մեկ անգամ հավաքվում է՝ քննարկելու նախատեսվող ծրագրերը, աջակցությունների համար տրված հայտերը, կարևոր իրադարձությունները, որոնց անհրաժեշտ է արհմիության մասնակցությունը կամ արձագանքը: Մենք բոլոր հնարավոր եղանակներով իրազեկում ենք աշխատակիցներին, և, իհարկե, թույլ չենք տա նման բացթողում, որ որևէ աշխա-

«Յուրաքանչյուր ծրագիր, նվեր կամ ուղեգիր մի փոքր լույս է բերում առօրյայի մեջ և հիշեցնում, որ աշխատակիցն ու նրա ընտանիքը միշտ գնահատված են ու կարևոր»:

Դիպլոմայինը՝ ԶՊՄԿ-ում

Բացի՛ր QR -ը, դիտի՛ր ուսանողների այցի մասին տեսանյութը

Զանգեզուրի ողնաշարաբանական կոմբինատը շարունակում է խորացնել համագործակցությունը կրթական հաստատությունների հետ՝ ճանաչողական այցերից բացի՝ առանձնահատուկ կարևորելով նաև գործնական պատրաստվածությունը:

2026 թվականի առաջին այցելուներից էին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի ուսանողները, որոնք դիպլոմային աշխատանքների պաշտպանությանն ընդառաջ, նախաավարտական պրակտիկա են անցնում ԶՊՄԿ-ում:

Նրանց առաջին կանգառը ձեռնարկության հարստացուցիչ ֆաբրիկայում էր, որտեղ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի նախաավարտական պրակտիկայի ղեկավար Տիմեյա Աղամյանի գլխավորությամբ, ուշադիր հետևեցին հանքաքարի մշակմանը՝ ջարդումից մինչև մանրացում:

Տիմեա Աղամյանն ասում է՝ ինքն էլ ժամանակին որպես ուսանող ԶՊՄԿ-ում է պրակտիկա անցել: Ապա աշխատանքի ընդունվել բուհում, 28 տարի շարունակ ուսանողներին տարբեր խմբերով ուղեկցել տարածաշրջանի հանքարդյունաբերական ձեռնարկություններ: Փորձառու դասախոսը համոզված է՝ կոմբինատ մտնելուց հետո միայն կարելի է պատկերացում կազմել արտադրական ողջ գործընթացի մասին:

-Միշտ ասել և ասելու եմ՝ ԶՊՄԿ-ի այս թափանցիկ գործելաոճը, ուսանողներին գրկաբաց ընդունելը, նպաստում է գիտելիքների ձեռքբերմանը և այդ մասնագիտությունը սիրելուն: Զանգեզուրի ողնաշարաբանական կոմբինատը տարեցտարի առավել արդյունավետ է սկսել համագործակցել բուհի հետ: Կցանկանայի, որ այս պրակտիկայի ընթացքում ուսանողները կարողանային նաև մասնակիցը դառնալ արտադրական պրոցեսներին, այսինքն՝ գոնե մեկ շաբաթ պրակտիկայի շրջանակում հաճախեին ձեռնարկություն,- նշում է Տիմեյա Աղամյանը:

Հարստացուցիչ ֆաբրիկայից հետո ուսանողներն այցելեցին նաև հետազոտական ու քիմիական լաբորատորիա: Այստեղ մանրակրկիտ հետևեցին հանքաքարում ոսկու պարունակության հարգորոշման գործընթացին:

Ուսանող Արմեն Բալասանյանն ասում է՝ շատ կարևոր է այս ամենը տեսնել գործնականում: Դասագրքային ու տեսական գիտելիքները այլ են, իսկ գործնականը՝ ամբողջովին՝ այլ:

-Իմ դիպլոմային աշխատանքը հենց մանրացման տեղամասի շահագործման նախագիծն է: Իրականում մենք այս ամենը տեսանք տեղում, թե ինչպես են գործընթացները իրականացվում, այլ է կարդալ այս ամենի մասին, այլ է՝ տեսնել աչքամբ,- նշում է ուսանողուհի Միլենա Հարությունյանը:

Տարբեր արտադրամասեր այցերից հետո ուսանողները նաև տեսական դասընթացի մասնակցեցին՝ ամփոփելով տարբեր օրերի շրջայցերը և նոր ստացած գործնական գիտելիքները:

Հերմինե Միքայելյան

Կենսաբազմազանության ուսումնասիրությունը՝ պատասխանատու հանքարդյունաբերության հիմք



Լուսանկարը՝ Բերտա Սարգսիրոսյանի

Տարոն Նավասարդյան
ԶՊՄԿ կայուն զարգացման տնօրենի տեղակալ

Կենսաբազմազանությունը էկոհամակարգերի կայունության և բնական հավասարակշռության կարևորագույն պայմաններից է: Բուսական և կենդանական տեսակների, ինչպես նաև դրանց բնակավայրերի պահպանությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն բնապահպանական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից: Այս համատեքստում արդյունաբերական ընկերությունների պատասխանատու մոտեցումը կարող է էական դեր ունենալ բնական արժեքների պահպանման գործում:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը տարիներ շարունակ իրականացնում է իր գործունեության հնարավոր ազդեցության տարածքներում կենսաբազմազանության ուսումնասիրություններ՝ առաջնորդվելով գիտական մոտեցումներով և միջազգային լավագույն փորձով: Ուսումնասիրություններն իրականացվում են ոլորտի փորձառու մասնագետների և միջազգային խորհրդատվական ընկերությունների հետ համագործակցությամբ՝ նպատակ ունենալով գնահատել էկոհամակարգերի վիճակը և առաջարկել հիմնավորված լուծումներ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների նվազեցման համար:

Կենսաբազմազանության ուսումնասիրությունները ընկերության համար շարունակական գործընթաց են: Տարբեր տարիներին իրականացված դաշտային աշխատանքների և մոնիթորինգի արդյունքում ձևավորվել է համադրելի տվյալների բազա, որը թույլ է տալիս գնահատել փոփոխությունների դինամիկան, բացահայտել հնարավոր ռիսկերը և աղահովել կանխարգելիչ բնապահպանական կառավարում:
2024-2025 թվականներին իրականացվել է առավել լայնածավալ ուսումնասիրություն, որի ընթացքում գնահատվել են բուսական և

Վերոհիշյալ ուսումնասիրության ընթացքում

կենդանական աշխարհի ներկայացուցիչները, հատուկ ուշադրություն է դարձվել հազվագյուտ և պահպանության հատուկ կարգավիճակ ունեցող տեսակներին և կենսաբնակավայրերի վիճակին: Ստացված տվյալները կարևոր հիմք են շրջակա միջավայրի վրա ազդեցությունների գնահատման, ռիսկերի կառավարման և կենսաբազմազանության պահպանման գործողությունների պլանավորման համար:
Կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքները համահունչ են նաև միջազգային օրակարգին՝ 2026 թվականին Հայաստանը կիյուրընկալի ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17): Այս համատեքստում իրականացվող ուսումնասիրությունները նպաստում են գիտության վրա հիմնված որոշումների կայացմանը և բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը:
Կենսաբազմազանության պահպանությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համար կայուն և պատասխանատու գործունեության անբաժանելի մասն է: Շարունակական ուսումնասիրությունների և երկարաժամկետ պլանավորման միջոցով ընկերությունը ձգտում է համատեղել արդյունաբերական զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետությունում այսօրինակ գործելաոճի տարածմանը և կայուն աղագային:

ԿԱՐԵՎՈՐ Է

«ՁՊՄԿ» ՓԲԸ հարգելի աշխատակից, աշխատանքային պայմանագրերի թվային համակարգի ներմուծման և կիրառման հետ կապված՝ պարտադիր է սեղմ ժամկետներում ունենալ վավեր նույնականացման քարտ և բջջային օպերատորի կողմից ակտիվացված էլեկտրոնային ստորագրություն: Ստուգեք Ձեր կողմից ՄՌԿ բաժնին տրամադրված էլեկտրոնային հասցեների ճշգրտությունը:



Ամրակապվելը կյանք է փրկում

Անվտանգության գոտին պարտադիր է բոլո՛ր ուղևորների համար

Ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում մահացության և ծանր վնասվածքների թիվը կարելի է նվազեցնել մեկ պարզ քայլով՝ անվտանգության գոտի կապելով: Խոսքը չի վերաբերում միայն վարորդին կամ առջևի նստատեղին նստած ուղևորին, ամրագոտի պետք է գցեն նաև հետևի նստատեղի ուղևորները. սա նաև օրենքի պահանջ է:

Ըստ միջազգային հետազոտությունների անվտանգության գոտին

- մահացության ռիսկը նվազեցնում է 45-60%
- կանխում է ուղևորի հարվածը դիմապակուն, թռիչքը մեքենայից դուրս
- նվազեցնում է ծանր վնասվածքների ռիսկը

Ըստ միջազգային հետազոտությունների, հետևի նստատեղում առանց ամրակապման նստելը ոչ միայն անվտանգ չէ, այլ կարող է վտանգել առջևի ամրակապված ուղևորի և վարորդի կյանքը:

- հետևի նստատեղում անվտանգության գոտի կապելը մահացության ռիսկը նվազեցնում է մինչև 75%
- առջևի նստատեղում նստողների համար վտանգը մինչև 2 անգամ մեծանում է, եթե հետևում նստած ուղևորը ամրակապված չէ

Միջազգային ուսումնասիրությունները փաստում են նաև, որ ճՏՊ-ների ժամանակ տուժածների զգալի մասը ուղևորներն են: Գնահատումների համաձայն, ամրագոտին կարող է կանխել վթարի պատճառով առաջացած ծանր հետևանքների 1/3-ը:

Վիճակագրական տվյալներ. 2024

- Հայաստանում գրանցվել է 4314 ճանապարհատրանսպորտային պատահար
- զոհվել է 333 մարդ
- վիրավորվել է 6116 մարդ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ | Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18 | www.zcmc.am press@zcmc.am

Համարի լուսանկարները՝ Նվեր Զեյայի